

Տարեկան գինը 10 րուբլ է և տարվանը 6 րուբլ:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

(Օտարադարձացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Миръ“

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Նախի կերակի և սօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը:—Ներքին տե-
սու թիւն: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—
Արտաքին տեսութիւն: Առ Օրիորդ խօսքեր:—
Զապէլ: Նամակ թիւրքականից:—Մշակիչ հեռագիր-
ներ:—Հայտարարութիւններ:—Տեղեկացոյց:—Բա-
նասիրական: Վ. Ազուլիսի վերջին անցքերը:

ԲԱՂԱՔԱՎԱՆ ՎԵՐՁԻՆ
ԱՆՑՔԵՐԸ

Իշխան Բիւսմարկի միանալը
յետադիմական կուսակցութեան
հետ Գերմանիայում մի առանձին
քաղաքական դրութիւն ստեղծեց,
որի վրա ամբողջ Լաւոպայի ու-
շադրութիւնն է դարձրած:

Այդ դրութիւնը հաւանաբար
հետաքրքրում է Ֆրանսիական
քաղաքական շրջաններին: Ֆրան-
սիական լրագիրների մեծ մասը,
մանաւանդ հանրապետական ուղ-
ղութիւն ունեցողները գերմանա-
կան գործերի քննութեամբ են
զբաղված: Եզրիպտական գործերը,
Թիւրքիայի դրութիւնը, որ նոր
կերպարանք ստացաւ Մահմուդ-
Նեզիմ-փաշայի վերադարձից յե-
տոյ, իտալական պարլամենտում
պատահած կոիւնները և աւստրիա-
կան Բէլստատի անդամների ըն-

տրութիւնը այնքան չեն հետաքր-
քում Ֆրանսիական մամուլին,
որքան Գերմանիայում պատահած
վերջին անցքերը:

Ուշադրութեան արժանի են
Ֆրանսիական հանրապետական
առաջնակարգ լրագիրների կար-
ծիքները և հայացքները իշխան
Բիւսմարկի գործողութիւնների վը-
րա:

Հանրապետական մամուլը բն-
նորով գերմանական գործերի դրու-
թիւնը ուշադրութիւն չէ դարձնում
այդ երկրի ազգային-ազատամիտ
կուսակցութեան կարծիքների վրա
և իշխան Բիւսմարկի քաղաքակա-
նութիւնը բոլորովին առողջամիտ և
խելացի է համարում:

Իշխան Բիւսմարկի դաշնակցու-
թիւնը կենտրոնական կուսակ-
ցութեան հետ Ֆրանսիական լը-
րագիրները անուանում են մի հը-
մուտ քաղաքագէտի համար-
ձակ քայլ, որ նա արել է, որ-
պէս զի անպատճառ հասնի իր
նպատակին և շատացնէ գերմա-
նական կայսերութեան ֆինանսա-
կան միջոցները:

Այդ նպատակին հասնելու հա-
մար իշխան Բիւսմարկ պէտք է
մաքային վերանորոգութիւնների
օրէնքը անցկացնէր գերմանական

պարլամենտում և որովհետեւ այդ
գործի մէջ իշխանը ընդգիմադրու-
թիւն գտաւ իր վաղեմի բարե-
կամների, ազգային-ազատամիտ
կուսակցութեան անդամների կող-
մից, ուրեմն զարմանալի չէր որ
նա օգուտ քաղեց կենտրոնական
կուսակցութեան մատուցած ծա-
ուայութիւններից:

Ֆրանսիական լրագիրները չեն
հաւատում, որ ազատամիտների
նախկին կուսակից գերմանական
առաջին մինիստրը փոխված լինի
այն պատճառով, որ այժմ օգուտ
է քաղում կենտրոնական կուսակ-
ցութեան պաշտպանութենից, որ
մի քանի ժամանակ առաջ իրան
ատելի էր: Այդ լրագիրների կար-
ծիքով միայն փոփոխվել է գեր-
մանական կայսերութեան ընդհա-
նուր քաղաքականութիւնը, իսկ
մարդը մնացել է նոյնը, ինչ որ
եղել է առաջ:

Ուրա լրագիրները քննելով Ֆր-
անսիական մամուլի յիշեալ կար-
ծիքները և հայացքները գտնում
են նրանց իրաւացի, բայց մի և
նոյն ժամանակ աւելացնում են
այդպիսի փոփոխական քաղաքա-
կանութիւնը ինչպէս Գերմանիայի
առաջին մինիստրի քաղաքականու-
թիւնն է, քննա է հասցնում ժո-

ղովուրդի բարոյական հասկացողու-
թեանը:

վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

վ. Պօլիս, 21 յունիսի

Խնդրութեամբ կը ծանուցանեմք թէ «Երկրեան
ընկերութիւնը» յաջողած է մի վարժարան բանալ
Ջէյթունի մէջ «Երկրի և ան վարժարան» ա-
նուամբ, տնօրէն—դասաւոր կարգելով ընկի Ջէյ-
թունցի և Շահնազարեան վարժարանի նախկին
յառաջագէտ աշակերտներէն պ. Խաչատուր Տա-
տուրեան որ մեծ փորձառութիւն ստացած է իւր
պաշտօնի մասին Ռօդոսթօյի և Մաշկարայի մէջ
վարած հնգամեայ դասաւորութեամբը:

Գործադիր ժողովը տնի բերկրաւոր լուրը ձեզ
հաղորդելով, կը խնդրէ ձեր մեծապատուութեանդ
որ բարեհաճիք զայն ձեր պատուական թերթի մի-
ջոցաւ հրատարակել ի գիտութիւն մեծայարգոյ
ազգայնոց:

Ստորագրութիւնը

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յուլիսի 1-ից ներկայ թիւի սկիզբ հրատարակել
ԽՄԲԱԳՐԱՅԻՆ մի նոր ամենօրեայ անցէղագրա-
կան թերթ ուսուցիչ լեզուով «Русский Курьер»
անունով: Այժմ հեռագրից իմանում ենք որ այդ
լրագիրը տէրութեան հրամանով երկու ամսով ար-
գելել է:

«Մշակի» հետեւալ համարը կը հրատարակվի
չորեքշաբթի յուլիսի 11-ին, որովհետեւ երկուշաբ-

ապահովացնելու համար, արդէն եղել էր ժողովրդի
մէջ նուիրատուութիւնների ստորագրութիւն, որի
գումարը հասնում էր մօտ 30,000 րուբլու: Այդ
գումարը, նոյն ժամանակ Վ. Ս. Կաթողիկոսից հա-
տատուած կանոնադրութեան համեմատ (յօդ. 18)
պէտք է յանձնված լինէր զարդոցների հողաբարձու-
թեան դանձապետին, և հողաբարձութիւնը պէտք
է շահեցնէր հարկւրին ութն (8%) տոկոսով, կո-
րուպտի պատասխանատուութիւնը իւր վրա առնելով:
Բայց երբ առաջին ողեղութիւնն անցնում է, երբ
սրտերը սկսում են փոքր առ փոքր հովանալ, յի-
շեալ գումարը փոխանակ իր ժամանակին ներկա-
յացնելու, իւրաքանչիւր նուիրատու իր ստորագրած
փողը իր մօտն է պահում, և հարկւրին ութն տո-
կոսի տեղ, հարկւրին վեց տոկոսն է միայն վճա-
րում ամեն տարին: Եւ այսպէս շարունակվում էր
մինչև ներկայ տարին:

Այդ դրութեան մէջ, շատ պարզ է, որ զարդո-
ցներ իսկապէս զուրկ էին նիւթական ապահովու-
թիւնից: Որովհետեւ նրանց արդիւնքը կազմող հիմ-
նական գումարները—30,000 րուբլին—այնքան
անհաստատ, այնքան երևակայական մի գումար
էր, որ կարող էր մի րօպէսում ողնաւոր լինելու:
—Նրա համար որ, նախդ փող մէջ տեղում չը կար,
կային միայն ստորագրութիւնների անվճար թուա-
նշաններ, որ գրված էին դանձապետ հողաբարձու-
մատեանի մէջ: Այս դէպքում, յայտնի բան է,
30,000 րուբլու վիճակը կախված կը լինէր նուր-
բատունների վիճակից,—մէկը անանկանաւոր, միւսը
աղքատանաւոր, կարող էր և դրամազրկաց պակա-
սել: Այսպէս էլ եղաւ: Այժմ 30,000 րուբլուց մը-
նացել է մօտաւորապէս 20,000-ը, լաւ են է սակ
քան հազարի տոկոսը:

Այստեղ պարզվում մի հարց կայ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Վ.-ԱԳՈՒԼԻՍԻ ՎԵՐՁԻՆ ԱՆՑՔԵՐԸ

վ.

Վերջին ամիսներում «Մեղուի» մէջ տպւեցան
մի քանի թղթակցութիւններ, որոնք յայտնում էին
Ազուլիսի զարդոցների անկարգութիւնները, վարժա-
պետների միմեանց հետ ունեցած անկարգանութիւ-
նը, հողաբարձութեան անգործունէութիւնը, ժողո-
վրդի անտարբերութիւնը և այլն:—Այս և նոյն
ժամանակ խուլ, վիրաւորական ակնարկութիւններ
էին անում դէպի մի անձնաւորութիւն, առանց
անունը յիշելու: Այս նամակները այնքան
սերտ կապ ունէին միմեանց հետ, որ կա-
րելի էր կարծել, կամ մի մարդու գրչից են դուրս
եկել և կամ մի ուրիշ խմբի ֆարքիկայիս լի-
նէին: Եւ իրաւ այդպէս էր: Մի քանի անձնիք
դարան մտած, մութ տեղից քարիւր էին արձա-
կում...

Գրողները փաստերը պարզապէս երևան չէին հա-
նում, երողութիւններ մէջ չէին բերում, միայն
միմեան ակնարկութիւններ էին անում: Ոչինչ հաս-
կանալ չէր կարելի, թէ ինչ էր պատահել, որով-
հետեւ մի աստիճանային բառ, միայն, մատի փաթե-
թան եղած, կրկնվում էր համարեայ բոլոր նամակների

մէջ: Այսու ամենայնիւ, յիշեալ նամակները աղբուկ
բարձրացրին, մի քանի թիւթակցութեան ուրախաց-
րին և մի քանի բարեմիտների մէջ զգուշացր
ցին: Իսկ «Մեղու», ինչ որ և անկողնիս ապահ
«Մեղու», «միայն մի կուսակցութիւնից ստացած
տեղեկութիւնների հիման վրա» կազմեց մի քանի
անխնայ անաւանդող յօդուածներ և նուրից Ա-
զուլիսի հասարակութեանը:

Մենք մինչև այսօր լուրսիւն էինք պահում Ա-
զուլիսում կատարվող անցքերի մասին, պատճառն
այն էր, որ փորձով համոզված լինելով,
որ երբ մի ժողովրդական երկպառակու-
թեան խնդիր մեր լրագրութեան մէջ է մտնում,
գործը աւելի խառնվում է, կուսակցութիւնները
սաստիկ գրգռվում են, կըբերը կատարի կերպա-
րանք են ստանում, և հակառակ կողմերը աւելի
և աւելի անհայտնել են դառնում:

Մենք ունէինք մեր ներքին գործերը և կամենում
էինք մեր մէջ վերջացնել բայց հիմա, որ բանը
բացվեցաւ, ուրեմն խօսենք:

Մենք ամենին ուշադրութիւն չը պիտի դարձ-
նենք մի քանի անհիմն խօսքերի վրա, նախ
այն պատճառով, որ երբեք սովորութիւն
չենք ունեցել պատասխանելու անստորագրի
նամակներին, երկրորդ այն պատճառով, որ
նրանցից և ոչ մէկը չեն վերաբերում բուն,
էական խնդրին, որից ծագեցան բոլոր երկպա-
ռակութիւնները: Մենք ուշադրութիւն պիտի դարձ-
նենք միայն երկու բանի վրա, ա. Ազուլիսի
դպրոցների ներկայ նիւթական դրութեան
թիւնը, բ. նրանց բարեւոքելու համար
գործ դրած միջոցները: Գրանով կը պարզ-
վին վերջին անցքերի բոլոր խտրիւքները:

Եւ իրաւ, Ազուլիսի զարդոցների անբարեկարգու-

թիւնը և նրանց ողորմելի վիճակը պէտք է որոնել
ոչ թէ վարժապետների անկարգանութեան կամ հո-
գաբարձուների թուլութեան մէջ, որոնք երկրորդա-
կան պատճառներ են,—այլ նոյն իսկ զարդոցների
կազմակերպութեան և նրանց նիւթական
չքաւարութեան մէջն է կայանում բոլոր ցար:

Խօսենք առաջ նիւթականի վրա:
Այդ խնդիրը աւելի չօգտակել կացուցանելու հա-
մար մենք ստիպված ենք դիմել զարդոցների պատ-
մութեանը, թէ որպէս հիմնվեցան նրանք: Մինչև
1867 թականը, այսինքն 12 տարի առաջ, Ազու-
լիսում կար միայն մէկ աղայոց դպրոց, և դա գտնա-
վում էր Հին-Նախիջևանի արքունական դպրոցի
տեսչութեան հսկողութեան ներքոյ: Ազուլիսի հա-
տարակութիւնը, որպէս գրաւական, ներկայացրել
էր 8000 րուբլի, և Հին-Նախիջևանի արքունական
դպրոցի տեսչութիւնը նշանակում էր վարժապետ-
ներ, տալիս էր պրօգրամա, մի խօսքով, ամեն կեր-
պով կառավարում էր Ազուլիսի դպրոցը, բոլոր
ծախսերը հասարակութիւնից ստանալով: Այդ դը-
րութիւնը անբաւականացուցիչ գտնելով, հասարա-
կութիւնը 1867 թին խնդրելով դիմում է Նորին
Վեհափառութեան ամենայն հայոց Ապօղովիտ
Գէորգ Գ. ին, որ Նորին բարձր Օծութիւնը թող
տալ Ազուլիսում բաց անել երկու հոգեւոր դպրոց-
ներ: մէկը աղայոց համար, միւսը աղվանց համար,
այլ և, խնդրում են, որ Նորին Վեհափառութիւնը
բարեհաճի ընդունել յիշեալ երկու դպրոցները իր
անմիջական հովանաւորութեան ներքոյ:
Ամենայն հայոց Հայրապետը կատարում է հասարա-
կութեան բաղձանքը, և առանձին կոնգրակով թող
է տալիս բաց անել դպրոցները, ընդունելով նրանց
իր գերագոյն հովանաւորութեան ներքոյ:

Մինչև զարդոցների բացվելը, նրանց գաղութիւնը

թիւ օրը, յուլիսի 9-ին, մեռելոցի տօնի պատճառով տալարանում չեն աշխատում:

Լսում ենք, որ թիւ 1101 հասարակութեանը յայտնի և մեր ընթերցողներին ծանօթ տաղանդաւոր թատրոնատիրուհի օր. Վ. Պաշայեան շուտով կը թողնէ Թիֆլիս և կուղևորվի Մոզդոկ այդ քաղաքի հայ օրիորդական ուսումնարանի վարժուհու պաշտօնը վարելու համար: Մեր թատրոնական կօմիտեան երեկ այդ հանգամանքը յայտնի չէ, որ չէ աշխատել պահել Թիֆլիսում տաղանդաւոր օրիորդին հայոց բեմի համար, կամ աւելի լաւ է ասել, որ կօմիտեան ընկած երկակայական ցընորքների ետևից, մարդիկ է ուղարկում և Պաշայեանը դերասաններ և դերասանուհիք բերելու, իսկ այն բաները, որ իր քթի առաջ կատարվում են, նա չէ նկատում: Օրիորդ Վ. Պաշայեանի Թիֆլիսից հեռանալը մի կորուստ է հայոց բեմի համար: Լսում ենք, որ պատուելի օրիորդը Թիֆլիսից գնալուց առաջ մասնակցելու է թատրոնատեսչների ներկայացմանը: Նրան հասարակութիւնը կը գնայ թատրոն դարձնալ մի անգամ տեսնելու իր սիրելիին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌ ԱՃՆՈՒԱՍՈՒՆ ՕՐԻՈՐԴԻ ԽԱՆՃԵԱՆ
ԱՊՐԵԼ

Ագնուուհի օրիորդ, անկարելի է բացատրել զգացած ուրախութիւնս կարգալով ձեր ազգային թատրոնի յօրուածը, որուն մէջ ակնհայտ է տեսնուէր որ զորդ օրիորդը ազգասիրական եւ ուսման լի, ուսմանց և գիտութեանց ըլլալէ քիչ վառուած, և ճշմարիտ Հայու սիրտ կը թող նախանձելի օրիորդ մըն էր: Ո՛հ ո՛ր էր թէ Հոյրհէին երկինք մեր տարաբաղդ Հայաստանին ձեզի նման բիւրաւօր օրիորդներ, և այն ժամանակ անտարակոյս մեր Հայագուն քաջաց երկիրը պիտի փրկէինք, բայց ափսոս, ափսոս որ մեր ազգին սրտերուն ամենուն մէջն ալ չը հնչեր մի և նոյն արձագանքն ազգասէր փողոյն, և մանաւանդ կ'ալնում ըսելու թէ կը գտնուին սրտեր որ նոյն իսկ Հայրենիք անունն անգամ անծանօթ է իրենց: Սակայն պէտք չէ վճատել Հարկ է իրարու ձեռք տալով անխոնջ և անդադար աշխատել, որ պէս զի Հայրենեաց արցունքները սրենք, և

ճանրացնալ շղթայները թեթեւեղներ: Եւ ինչպիսիք կ'ընենք յաջողիլ արդեօք:—Եթէ հասկըցեր ենք որ մեր Հայրենեաց արեւտալից գերութեան և թշուառութեանց բուն պատճառը տգիտութիւնն է, ապա տարակոյս չը կայ որ մեր առաջին փողոյն և ինտելլիգենտի պիտի ըլլայ դպրոցներ բանալ, և ազգայնոց սրտերուն մէջ մինչև ցայսօր օտար եղած ազգութեան զգացմունքները արթնցնել:

Հաճութեամբ կը տեսնէի որ այլ և այլ ընկերութիւններ ազգիս մէջ կը ձևանային որոնց նպատակը այս միայն էր, տգիտութիւնը փարատել Հայաստանէն, և իմաստութեան փրկուէտ ջահը վառել մեր Մասեաց գաւթանը վրայ: Բայց սրբաբնի աւելի ուրախութեամբ մը կը դիտեմ որ դեռահասակ օրիորդի մը Հիմնադիր ըլլալը նոյնօրինակ ընկերութեան մը որ ամեն աշխատութիւն յանձն կ'առնէ իր Հայրենեացն համար. ինչի վիճակից օրիորդ մը երբոր կը տեսնեմ որ խրատայ բարձած քաջաբեր կը կարգայ իւր օրիորդաց դասուն, սիրտս իրեն և ազգիս սիրով վառուած՝ կ'օրհնեմ զինքը, կ'օրհնեմ ճապէլ անունը, որուն յիշատակը անշուշտ գովեստանքով և դրուատիւք պիտի աւանդէ ապագայից անաչառ. պատմութիւնն, որ արդէն համահունչ թաղուհի մը կը ներկայացնէ մեզի Հայագուն սրտերու օրհնանքներով ձոնացեալ: Ո՛վ աղիւս օրիորդ, ձեր գործած բարիքն ալ անմահութեան և օրհնութեանց արժանի է, քանի որ տգիտութեան աղշամղջին մէջ թաղուհի միանգամ ժողովուրդ մը արթնցնել կը ձգնէր գաւառաց մէջ, որոնք խեղճերը կը թաղուէին և ուսմանքէ զուրկ մնալով, իրենց անգին կիսնքն ու ժամանակը անգուռ տեղ կը փնջանէին, և երանի թէ անօգուտ միայն ըլլար:

Արեւ թէ Հայաստանը փրկելու համար պէտք է ահարկու անտառներէ անցնել, դրժուար ճամբայներէ քալել. բայց ո՛չ ո՛չ այն խոչընդոտներ պատճառող և նեղ մացառուտ ճամբայները մեզի շատ հեշտ են և ընդարձակ պիտի երևին, քանզի մեր սիրելի Հայրենեաց համար է, ահարկու գաղաններուն դէմ պիտի կենանք քաջութեամբ մարտնչելով քանզի մեր անձկալի Հայրենեաց համար է: Հայրենիք, ո՛հ այս անունը ջրատեալ անդամներու յոյժ կուտայ և դողդոջուն քայլերը կ'արագացնէ: Հայրենիք, ի՛նչ քաղցր և սրբազան անուն մը հայու մը համար. այդ սիրելի ընկերութիւնը հայկազուն օրիորդներ, պէտք է աշխատենք

պէտք է փրկենք մեր Հայաստանը: Նարթոք Գորտէ դեռահասակ գաղղեացի աղջկան մը չափ ալ չենք արդեօք որ ամեն վտանգ և դրժուարութիւն աչքն առնելով մարդակերպ գաղանի մը դէմ դիմադրաւեց և իր Հայրենիքը անոր ազգակործան հարուածներէն խալըցուց: Հետեւելու ենք ուրեմն այսօրինակ քաջերու, որոնք մեր սեռին քաջագուններն ու փառքերն են: Փութեանք գաւառաց մէջ գտնուող աղջկանց սրտերուն մէջ Հայրենեաց սէրը վառելու, և Հայրենեաց համար աշխատելը սրբազան և քաղցր պարտք մի ըլլալը անոնց մտացը մէջ տպաւորենք:

Արդեօք Հայրենեաց սիրոյն համար չէ՞ր որ մեր նախնի քաջերը ամեն բան աչքերուն առած աշխատեցան Հայաստանի փրկութեան և փառացը համար: Ո՛վ քաջք, նետեցէք ձեր վըրայէն կափարիչ թխացեալ քարերը, վերցուցէք գլուխնիդ, տեսէք ձեր սիրելի Հայաստանը որ աւերակ և անբեր անապատ է դարձեր:—Հայաստան երկիրդ իմ սիրելի, կորստանալ պատճառ քու հայ ժողովուրդ է, մեր անմիաբանութիւնն է որ մեր ազգը կործաներ է, վասն զի միութիւնն է ազգի մը նախնի յոյժը, ինչպէս կըսեն գաղղեացիք թէ ի միութեան է յոյժը: Այո ազգ մը առաջ տանելու համար միութիւն պէտք է սրտերու, միութիւն աշխատութեան, միութիւն ամեն բանի մէջ, մանաւանդ այս միջոցիս որ բոլոր սերունդ մեր վրայ ուշադիր կը դիտեն զմեզ. պէտք է միասնաբար անբաժանելի կապով որ ազգը փրկել յաջողինք: Ինչ է արդեօք Ամերիկայի ձեռնութեան և օրէ օր պայծառանալուն պատճառը, արդեօք միութիւնը չէ՞, Յոյները իրենց Հայրենիքը և իրենց կենդանութեան ախոռը արդեօք միութեամբ չէ՞ր որ կըցան կանգնել:

Ստորեւ տեսնելով Ազգանուէր ընկերութեան ալ առջի և վերջի նպատակը ոչ այլ ինչ բայց միութեան ըլլալ միայն, քանզի միութեան դիմաց՝ ամեն դժուարութիւնք տեղի կուտան: Այսպիսի օգտակար և ազգասէր ընկերութեան մէջ յօժարաբոյժ կը դիմեմ ևս ալ, վասն զի ձեր բարերար խմբին մէջ խառնելի փառք կը սեպեմ ինչի ևս ալ և բոլոր ջանքս ի գործ պիտի դնեմ իմ բարեկամահիներս ժողովուրդ այս բարեգործ ընկերութեան օգնելու միաշունչ և միահոգի. ատենք անձնասիրութիւնը, հեռի մեզմէ նախանձը և փառասիրութիւնը մի սիրտ և մի մարմին ըլլալով և մեր շըրթութիւնները միշտ միութեան հնչեցնելով աշ

խատենք Հիմնադիր Խանձան օրիորդին աջակիցք և խնդրենք:

Ազնիւ օրիորդ, զոյս նպատակը ուրիշ բան չէ՞ բայց թէ ձեր գրած յօդուածէն զգացած եռանդս և խորհրդածութիւններս ձեզի և ազգիս յայտնել:

Ի Կ. Պոլիս
Փաղքեզոն գիւղին 25/7 յուլիսի 1879
Մարիամ Ա. Պիլօրեան
Մենալ Հէքիմեան

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՅ

Էրզրում, 20 յունիսի

Ջանադան պատճառներով կամ նկատողութիւններով պահ մը լռութիւն պահելու պարտաւորեալ վերջապէս կը համարձակիմ խղել զայն առաւել գրութեանցս ձեր պատուական թերթին մէջ անկիւն մը գտնելու. Հորդէն քաջաբերութեան և գոնէ առ երեսոյն երջանիկ առիթներէ դողեալ լինելու բաղաւորութեամբ:

Արդէն նախորդ գրուած յայտնած էի թէ Կարին սկսեր է իւր միտելութեան քննի փորձ ինչ վերադառնալ գլուխը, մինչդեռ շատ նուազ կարեւոր տեղեր յօտն կանգնած էին, թէ տեղւոյս պատաւաւ միտ երիտասարդները կը մտաբերեն սթափիլ իրենց թմրութեան. մինչդեռ շատ գիւղացաւորաց կանայքն իսկ առնական գործեր կատարելու վիճակի մէջն էին: Սակայն և այնպէս հազար փանօք այս յարութեան և սթափման, զի կարծուածէն աւելի արագ եղաւ, և իւր առաջին արդիւնքն է գոնէ ցոյց տալ աշխարհի թէ հայաստանցի հայն և ոչ մի ժամանակ չէ կորուցած իւր մէջ կենդանութեան ոգին և վերածնութեան սերմերը. Ի պահանջել հարկին կըսալ նոյն իսկ իր քարերէն դէպ յուսն սրտեր պատրաստել. որի հոգ չէ թէ ոչ, կրնան մարմնաւորել, աճել, զարգանալ և բեղմնաւորել:

Յիշատի, Ղազարու յարութեան չափ հրաշալի է այս վերակենդանութիւնը, և ամեն սիրտ որ կը զգայ, ամեն միտք որ կը խորհի չի կրնար անտարբեր մնալ այն սթափ տեսարանին առաջ, զոր կենդանի սրտը Կարնոյ երիտասարդութիւնը, որուն երկար ժամանակ կշտամբելէն լինելու դժբաղդութիւն ունենալովս, այսօր խիստ ուրախ եմ հրապարակաւ ներդրելու կարգաւոր պատիւն ունենալուս, զի արժանի է: Ներտասարդները կըսեմ, որք ասկէ յառաջ անհոգ ազգային գործոց և ընդհանուր լուսաւորութեան մասին, անձնական շահուց համար զիրար անխօսքէն խաղաղաւանդութիւն տրամադիր, անհատական բարօրութիւն միայն իրենց ամենօրեայ մտածողութեանց միակ առարկայ ըրած, առանց մի ընդհանուր կապի, ուղղութեան և նպատակի, իւրաքանչիւր իւր ճապակն ու կիլքը միայն յաղեցնելու ջանադիր և հետամուտ

ծովութեան, որ նրան դուրս անեն, կամ հաճելի էր այս և այն նուիրատու աղային մի անպիտան վարժապետ, նա կարող է անարդի կերպով ներս խցկիլ նրան դպրոցի մէջ, Այսպիսի հանդամանքներում հոգաբարձութիւնը կամ դպրոցների տեսչութիւնը կամայ—ակամայ ստիպված է հաշտվել այս և այն աղայի կապիղիների հետ, որովհետև հակառակ դէպքում, աղան նրան կասէ. «ես ա մեն տարի այդքան փող եմ տալիս, եթէ իմ խօսքը չէք լսի, մի կողմէն էլ չէք ստանալ»... Եւ որովհետև մի և նոյն վարժապետը կարող է մի աղայի հաճելի լինել, իսկ միւսին ոչ,—այստեղից առաջ են գալիս երկպառակութիւններ աղաների մէջ. մէկը պաշտպանում է անպիտանին, միւսը հաշտւում է:

Այսպիսի հանգամանքներում Ազգութիւն վարժապետի դերութիւնը անտանելի է: Նրա արժանաւորութիւնը պայմանաւորվում է ոչ թէ այն բանի մէջ, թէ որքան տիրում է իր յանձն առած առարկային, թէ որքան հմուտ է նա մանկավարժական եղանակներին,—այլ գլխաւորապէս այն բանի մէջ, թէ որքան ճարպիկութիւն ունի դուր գալու: Որովհետև նա կախում ունի ոչ միայն հոգաբարձութիւնից, այլ բոլոր այն աղաներից, որոնք դպրոցներին փող են տալիս: Վարժապետը ստիպված է բոլորի առջև ցածանայ, բոլորին շողորմել, որ կարողանայ պահպանել իր պաշտօնը: Վարժապետի ականջները խուլ պէտք է լինեն, իսկ լեզուն—կարճ: Մի փոքր ի շատէ անձնասիրութիւն ունենալով վարժապետը, մի փոքր ի շատէ աղին վարդը պէտք է հազար ու մէկ անախորժութիւններով հանդիպի: Ո՛ր մէկին կարող է հաճոյանայ նա, որքան նուիրատու աղային այս և այն բարեխիղճ վարժապետը, նա կարող է ստաշարկել հոգաբար-

Յիշատի 20,000 ռուբլի գումարը ամբողջապէս նուիրատուութիւն չէ, ալ նրա մի մասը՝ այսինքն 12,000 ռուբլին բարեբարեւերի ստորագրած փող է: Պէտք է հասկանալ, թէ ինչ է նշանակում գրաբերաւ և նրանք այդ գումարը ինչու համար են ստորագրել: Բարեբարեւերը ստորագրվել են 600 և 400 ռուբլի. առաջին գումարի տոկոսով դպրոցների հոգաբարձութիւնը պարտավորվում է պահել բարեբարեւանունով մի որդեգիր, իսկ երկրորդ գումարի տոկոսով հոգաբարձութիւնը պարտավորվում է պահել բարեբարեւանունով մի որդեգրուհի: Ուրեմն 12,000 ռուբլի բարեբարեւերի ստորագրած փողը դուրս գալով քսան հազարից, մնում է 8000 ռուբլի, որի տոկոսը կարելի է դպրոցների մշտական արդիւնք համարել:

Առհասարակ խօսելով, բոլոր եղած նուիրատուութիւնների ձեռք և նպատակի մէջ այնպիսի հետաքրքիր կէտեր կան, որ մենք քայքայութեամբ համար, ստիպված ենք մի քանի մանրամասնութիւնների մէջ մտնել:

Մենք տեսնւք, որ նուիրատուներին կարելի է երկու կարգի բաժանել՝ առաջինը բարեբարեւեր, երկրորդը զոհարարութիւններ, այս վերջինները իրանց կոչում են հիմնադրութիւններ: Խօսենք իւրաքանչիւրի վրա առանձին: Բարեբարեւերը, որպէս միջոցներ, ստորագրած փողը իրանց գրպանում պահելով, տարին 400 ռուբլու տոկոսն ան վճարում (հարկւն վեցով) մի որդեգրուհի պահելու համար, իսկ 600 ռուբլու տոկոսն են վճարում մի որդեգիր պահելու համար: Գլխաւոր դեղձումը նրանումն է, որ դպրոցների կանոնադրութեան 4, 5 և 19-որդ յօդուածների համեմատ թէ որդեգրվելների և թէ որդեգրուհիների ընտրութիւնը պէտք է լինի հոգաբարձութեան հաւանութեամբ, և նրանք պէտք

է ընտրվեն չքաւորներից միայն: Բայց բարեբարեւերը առանց հոգաբարձութեան կախը հարցնելու, իրանք են ընտրում, այն ևս իրանց ազգականներից: Եւ եթէ պատահում է նրանց դպրոց տալ մի օտարական աղքատի որդին կամ աղջիկը, անպատճառ որդեգրի հայրը կամ մայրը ծառայելիս պէտք է լինի բարեբարեւի տանը, և նրանց ուժերից հաշուում են: *)

Այսքանը բարեբարեւերի մասին, հիւսս դառնալը դէպի ինքնակոչ հիմնադրութիւններ:

«Հիմնադրութիւն» կոչում են իրանց այն պարտնեւորը, որոնք ստորագրել են յօդուտ դպրոցների մի գումար (ոչ պակաս 300 ռուբլուց) և մինչև այսօր փողը իրանց մօտ պահելով, նոյնպէս տոկոսն են վճարում: Գլուխների կանոնադրութեան համեմատ, այդ

*) Մեզ պատահեց նկատել մի քանի պայտի օրինակներ, ումանք վարձում են մի տղայ տանը սպասարարութիւն անել տալու համար, կամ վարձում են մի աղջիկ որպէս աղակիւն. նրանց վարձ չեն տալիս, այլ փոխարէնը ուղարկում են դպրոց կարգաւոր: Այս ողորմելիները այն ժամանակ միայն կարող են դասի գալ, երբ տանը գործ չը կար, և ամբողջ օրը տան գործերով զբաղված լինելով, երբէք ժամանակ չեն ունենում իրանց դասերը պատրաստելու: Այս կերպով ծառայ կամ աղակիւն վարձելը շատ է ծանր և նստում:

*) Բարեբարեւեր ընթէ իրանց ստորագրած փողերը վճարած լինելին, այդ ուրիշ բան էր, բայց այդ դրութեան մէջ նրանց դպրոցը տուած աշակերտներին ոչինչով չէ կարելի զանազանել թոշակատու աշակերտներից: Գլխաւոր ստորագրել և չը տալ, նոյն գումարի տոկոսը միայն վճարել այն չափով, որքան վճարում է մի թոշակատու աշակերտը,—դա մի ձև է մի պատուաւոր անուն կրելու—բարեբար:

«Հիմնադր» կոչվածները ոչ մի առանձին իրաւունք չեն վայելում, բայց նրանք փողը իրանց գրպանում պահելով, դրանով սեփականացրել են իրանց անասման արտօնութիւնները դպրոցների վերաբերութեամբ: Օրինակ կանոնադրութեան համեմատ (յօդ. 10.) Ազգութիւն ամբողջ հասարակութիւնը իրաւունք ունի, որպէս իր ներկայացուցիչ, ընտրել 25 երեսփոխաններ, որ այս վերջինները ընտրելին հոգաբարձութեան իրենց: Բայց ինքնակոչ «հիմնադրները» իրանք են ընտրում երեսփոխաններին այն ևս իրանց միջոց: Մինչև այսօր միայն գամ ևս չէ պատահել, որ ժողովրդից մի մարդ երեսփոխան կամ հոգաբարձու ընտրված լինէր, եթէ «հիմնադր» կամ բարերար չի եղել: Եւ որովհետև այդ բարերար կամ «հիմնադր» կոչվածները մի քանի պարտնեւոր են, այդ իսկ պատճառով դրւորոցների վիճակը միշտ կախված է եղել մի քանի աղայների կամքից: Գրանից առաջ էին գալիս շատ երկպառակութիւններ, որ միշտ եղել են և այժմ լինում են դպրոցների անկարգութեան բուն պատճառները: Ահի ինչու:

Թողնենք այն, որ փողը «հիմնադրներին» և բարեբարեւերին մօտ մնալով, կարող է հետզհետէ կորչել, և ոչնչանալ: Թողնենք այն, որ փողի իրաւունքը իրանց ձեռքում պահելով, բարեբարեւերը կամ «հիմնադրները» իրանց են սեփականացրել ընտրողական իրաւունքը.—խօսենք այն բանի վրա, որ յիշեալ աղաները բանեցնում են անասման խնտրեղանքը դպրոցների ներքին գործերում միջամտելով, և որքան շատ էր նրանց ստորագրած գումարի ողորմութիւնը, այնքան մեծ է լինում և նրանց կանայականութեան չափը: Օրինակ, դուր չիկաւ նուիրատու աղային այս և այն բարեխիղճ վարժապետը, նա կարող է ստաշարկել հոգաբար-

էր. բայց ընդ շնորհակալութիւն ուսական բա-
նակին հետ կարին մտած ազգասէր հայոց, որոց
շնորհք այդ մեղեկացիները ստանալով իրարու մօտե-
նայով, մտքերը ի մի կէտ ուղղուելով՝ վերապէս
կարելի եղաւ խորհել կրօնող գլխոց գաղափարները
ի մի կարգադարձ ձեւերու. Պաշտպանութեան պէտ-
քը ընկերակցութեան հոլըր արծարծեց արդէն
բարբառաւ ստեղծուած մէջ, և բարոյական շահերու
համար կազմուած մի քանի ընկերութեանց տուած
օգուտներուն վրա նկատելով իրենց անհատական ա-
ւելանալու. կառավարութեան տան սրահէն սկսեալ
մինչև ամենամեծ փողոցներու և շուկաներու
մէջ միշտ գտնուող հայն, այսօր այդ ընկերու-
թեանց միաբանութեան և իրենց պաշտօնական շը-
նորհիւ ոչ միայն համարեալ թէ ազատած է իւր
բազմադարեան այդ ճակատագրէն, այլ և շատ
տեղ ալ ինքն զիրենք ծնծկելու և վերջէն ալ
դատաւարութեան բազմադարեան ունի. յիշեալ ժրու-
թեան հետ խոսակցութիւն, գրգռականութեան
հետ չափաւորութիւն, նախանձի տեղ կատարեալ
անկեղծութիւն և ետեւեան տեղ կատարեալ անձ-
նագոյութիւն անձնաւորեալ լինի մարմնող մը վրայ,
ներքին չէ արդեօք հաւատալ թէ կարող երկուս-
տարողութիւնը աշխատակցութեան և յարաբերու-
թեան պիտի համար ի գլուխ հանել իւր բոլոր
բարի առաջադրութիւնները և փտահանել զամեն
հայերը թէ կարելի ինքնին պիտի լինի, քիչ որ ու-
րիշ տեղերու համար ընել կը զոհեն Վարդա-
տեան, Վարդապետ և այլ ընկերութիւնը և Ստանա-
րեանը, Սպարձապետը և այլ ազգասէր բարերարը,
վասն զի կարելի ոչ այնչափ նկատական նպատակ
կը կարծիք, որպէս որ բարոյական օժանդակը
և առաջնորդի. դրամական խնդիրը ոչինչ է, միայն
մարդու սուր ամեն պարագայի և ժամանակի մէջ
ամեն տեղէ և ամեն բանէ աւելի զգալի և ստիպո-
ղական է իրեն: Սոյն կարծաւոր ծանօթութիւնը
անոր համար հարկ համարեցի ընել, որ Ստեփանոս
վ. մեծագոյնը ստատը և մատակարարը բա-
րեհաճին նկատողութեան առեւել զայն, և ըստ
այնմ խորհին կատարել իրան խորհուրդները:
Քանի մը իրողութիւններ ալ ինձ փաստ բերելով
կը յուսամ թէ աւելի հաւատարմալից կրնամ ա-
նել մինչև ցայսր ասածներս:

Տաճկական կառավարութիւնը կարգել է զմատե-
րական ընկերութիւնը հայկական ներկայացուցիչներ
տալէ. նա ալ անկեղծութիւն համարելով փոխա-
դէպ ալեւոյց հետ մարտնչել պահ մը սկսեցին և վեր
բարձրանալէն յետոյ թուրքական մուսուլմանութեան
և իշխանութեան գլխոյն փոխուելուն հետ և
իւր ընդհանուր դրութեան ալ փոխուելուն շնորհիւ
ձեռք կառնու շնորհ իւր կիծին թելը, և երկու
անգամ գալ Վ. հ. հ. հ. իւր ամենի կատարու-
թեամբ, Ս. Ն. Ե. Բ. Ե. իւր անսանձ խանդերովն
երևանալով թատերարան միայ իրենց յուսարեկ որ-
դիւն ստանալովցին, ուսանց ստեղծել զգացումով և
յոյսով լեցնելով, ուսանց ալ սուրբ նպատակին գոր-
ծադրութեան միջոցներ հայթայթելով:

Երբ որ Հայաստանէն դուրս գտնուած հայերը

Հայաստանի բարեկարգութիւն գտնելով Սուլթանի
կառավարութիւնը կը ձանձրացնեն, կը շուրջեց-
նեն, բայց վերջապէս կը պարտաւորացնեն և կը
զբաղեցնեն, միթէ ցաւալի չէր լինել տեսնել որ
Հայաստանցին իսպառ անհող է իւր ձեռնհասու-
թեան ներքև գտնուած միջոցներն ի գործ դնելու
իւր արեւակցաց ջանքերն ի մասին իւր պատկե-
ւու համար, իւր ներքին պակասութիւնները շտկե-
լով և պէտքերը լեցնելով. և ինչ օգուտ պիտի
կարենան գործել խոտառացեալ բարեկարգութեանը,
միթէ խղճի մտօք կատարութիւն մը, քանի որ տե-
մեր մէջ այն զեղծութիւնն ու անբարութիւնները,
զորս մեծաւ մասամբ իրենց ամեն գոյներով երևան
հանեցին հերոսան ազգային քննիչ հարը: Կարենցի
այս մասին խորհեցան. շատ խորհեցան. և լաւ ճա-
բայ մը բռնեցին կրթութեան, հասարակաց դաս-
տիարարութեան խնդիրը ձեռք առին, իրեն մեջ
ամեն ճշմարիտ քարեկարգութեանց, իրեն անա-
պատելի աղբիւր իսկական աղատութեան: Գլխա-
րոցներու բարեկարգութեանց մեծ ստիպողակա-
նութիւն տալով կրցաւ երկուստարողութիւնը իրեն
հետ միացնել ժողովրդեան մեծ մասը, որոյ գորու-
թեան շատ պէտք ունէր, և ասով յաջողեցաւ
պարտաւորեցնել զառաջնորդ, ժողովականները, ե-
րանկները, որը սոյն յեղափոխական հոսանքին առ-
ջն եկած սկսեցին են կամ ստիպուած են ձանաչել
և կատարել իրենց պարտը: Սոյն շարժմանց և
գործողութեանց առաջին ներգործութիւնը կրեց
զաւառական երեսփոխանութիւնը, որոյ անկարգ
և ըստ մեծի մասին անդամներ անդամաց տեղ կա-
նոնաւորութեան և յառաջդիմութեան նախանձա-
կանքի և ձեռնհասու կարող անձինք եկան, որը
մեծ եռանդամը գրկելով դատարարական խնդ-
րիւր փութացին նախ ձանաչարարին արգելքնե-
րը վերցնել ու չտեղ զայն, և այս նպատակաւ
ձեռք գրաւին և յաջողեցան վարչական ժողովի
համար բանագէտ, խեղհատ և գործունեաց մար-
դիկ ընտրել: Վարչական ժողովոց իրենց պաշտո-
նին արժանապէս ընթացքէն հետեցաւ և միւս
ժողովոց ու խորհուրդ աշարժութիւն. 20—24 ա-
մին անգամ միայն ժողովականներ ընտրելու հա-
մար նիստ ընող երեսփոխանական ժողովը այսօր
ամեն տան և հինգ օրն անգամ կը գումարի և
ազգային այլ և այլ կարևոր խնդիրներով կը զբա-
ղի: Գաղաքական ժողովն և թաղական խորհուրդն
միակամ, միասիրտ ձեռնարկեցին և ընտրեցին մի
ուսումնասիրողաբան մարմին դպրոցական բարե-
փոխութեան և ուղղութեան համար, և իրեն ձեռ-
նարկած գործին քիչ ատենէն արդիւնաւորել տես-
նելու մեծ յոյս կը տածեն խելահաս անձինք առ-
հասարակ, զի խաբարով չէր ի նիւսնց քակելու և
լինելու յատակաւորին. կը հետեւի, սահմանադրու-
թեան և երեսփոխանական ժողովին առած իրա-
ւունքով թաղային տուրք դնելով ամեն ընտանիք
դպրոցական թոշակ առնելու պարտաւորիչ դրու-
թիւնը հաստատելու ծրագիրը պատրաստել, և
այսօր այդ տրոց յարմարաւոր բաշխման կը զբա-
ղի, այսպիսով դպրոցները կազմաւորն միանգամ

եղել է 30,000 բուրջ, *) թէ 10,000 բուրջի այս
գումարից կորել է և այժմ մնում է 20,000 բուրջի,
այն ևս բացատրելից, որ յիշեալ քսան հազարից
12,000-ը բարեկարգութեան ստորագրած փող է, որի
պատճառով նրանք իրաւունք են ստացել որդե-
ղիները տալ դպրոցներով, իսկ 8000-ը իսկական
նուրբարութիւն է, որի համար նուրբարութեանը
օժիմաղդիւն անուն են ձեռք բերել: Մենք տեսնե-
նաւ, թէ օժիմաղդիւնները և թէ բարեկարգութեան ի-
րանց ստորագրած գումարները մինչև այսօր չեն
հատուցել և միայն տոկոսներ են վճարում: Այժմ
տեսնենք, որքան տոկոսներ են ստանում դպրոց-
ները:

Գլխորդների այժմ մնացած քսան հազար բուրջի
երեսփոխական դատաւարից ստացուած է տոկոսա-
գրամ (փոխանակ 8%) հարկերին վերցնելով 1200 բ.
Միթէ այս չնչին գումարովն են կառավարվում
դպրոցները, որ տոկոս վճարողները սեփականաց-
րել են իրանց այնքան անիրաւացի արտօնութիւն-
ներ:— ոչ:

Յիշեալ 1,200 բուրջի տոկոսագրամը աշակերտ-
ներից և աշակերտուհիներից ստացած թոշակադ-
րամը հետ և թօմայ առաքելոյ վանքից ստացած
600 բուրջու հետ, բերում են տարին մօտաւոր-
ապէս 4000 բուրջի արդիւնը: Այս գումարով պէտք
է կառավարվեն երկու դպրոցներ՝ օրինորդաց և
տղայոց: Թէ որքան անբաւականացողիչ գումար
է այդ, կը յայտնվի հետեւեալ հաշիւից:

Երկու դպրոցներով— օրինորդաց և տղայոց— ունեն
իրանց նախակրթարաններով ու միջ դաստիարակ-
ութեան (շարժական 204 դաս) և առարկաների

*) Յիշեալ բոլոր թուանշանների մէջ մենք վեր-
ենք առել միայն կոյտ թիւ, աւել կամ պակասը
ի բաց ձգելով:

ընդ միշտ եկեղեցիէն և եկեղեցականներէն կա-
խում ունենալու վատթարութիւնէն, և զեկեղեցիէն
ու իւրաքանչեւ ևս շատ լաւագոյն դրութիւններու
կարելի կըլլայ վերածել կարաւանական եկամուտ-
ները լաւագոյն մատակարարելով, որոյ պակասու-
թեամբ և անբաւականութեամբ այսօր եկեղեցին և
դպրոցն միանգամայն անփառունակ վիճակ մը ու-
նեն: Երբայ այս վիճակին մէջ առաջնորդն իսկ
թերեւս անգոր, ինչպէս կըսեն, առաջն առնելու
այս ժողովրդական խանձիչ, բայց այրիչ հրդեհին,
սկսեց է ի մեծ զարմանա շատերու խօսել և քա-
րողել ազգութիւն, ընկերութիւն, դպրոց, լոյս և
գիտութիւն: Եւ ասկէ յառաջ առաջնորդը փոխե-
լու հակառիտ և ամեն ճիշ թափոնները աւելի կը
սիրեն նորա այս ընթացքի և վարմանց փոփոխու-
թեան շարժականութիւնը տեսնել. զի Կ. եպիսկո-
պոսը իրապէս զարգացեալ, խելացի և բազմափորձ
մարդ լինելով կրնայ մեծամեծ օգուտներ գործել
երբ ուզէ: Տեղույս երկուստարողութեան ձեռք բե-
րած այս բարոյական օգուտներէն ամենէն աւելի
գեղեցիկն ու վսեմն այն ոգևորեալ վիճակն է, յո-
րում կը գտնուի Կարոյ հասարակութիւնը ազգա-
յին ամեն կարգի զոհաբերութեան պատրաստա-
կանութեամբ: Մայիս 22-ին դեռահասներու ու-
սումնասիրաց ընկերութիւնը իր տարեդարձը մեծա-
շքեղութեամբ կատարած միջոցին հանդիսական
ժողովուրդը վերջին ծայր զգածեալ և ի նշան իւր
կատարեալ գոհունակութեան հանգանակութիւն մը
բացաւ և մէկ ժամուան մէջ 30 ոսկի (300 բուր-
ջի) գումար մը զոյացաւ. աւելորդ է ըսել թէ ա-
սով քանի աւելցաւ այս գործաւոր մեղուաց ե-
ռանդն ու ջանասիրութիւնը, որ իւր բարեգործու-
թեանց վրա աւելցուց նաև իրեն դիմող ուսանող-
ների արտաքին աշխարհին հետ ալ ծանօթացնել
քանի մը թերթեր բերել տալով. յիշաւ կարծէր
որ ատոնց գնելը այս խնայողութեան ստուգէն
չէին, բայց իրենց դեռ ևս ընդ գրուանաւ
մնալու խոսակցութիւն ունենալով շատ մը բարի
ստերու անձանթ է իրենց գոյութիւնը, իսկ ասկէ
բերապատիկ աւելի ջերմ և գրեթէ անհամեմա-
տելի էր այն համակրութիւնը, զոր ցոյց տուաւ
հասարակութիւնը թատերական ընկերութեան, որ
զինքն առանձին տոմսակներով կը հրաւրէր լու-
սաւորչաց վանքը առանձնադրութեան տարեդարձի
հանդէսը կատարելու. բուն կողմանքը 250-ի կը
մօտենային, իսկ հանդիսական բազմութիւնը 1000-ը
կանցնէր: Եւ կը թողում նկարագրել այս մեծա-
շքը հանգէն իր մանրամասնութեամբ և ընթերցո-
ղին կը ձգեմ ինքնին երկակայել թէ ինչ կը լինի
հայրենի հողի վրա կատարուած ազգային տօն մը,
և պիտի անցնի մըց տալու այն տպաւորութիւն
ու յիշատակը, զոր թողոց այս հանդէսը ազա-
գային համար ամեն հայոց սրտին և մտքին մէջ:
Յիշատակ մը որ իբրև պատկ պիտի ծառայէ Կար-
ոյ երկուստարողութեան գործոց: Երբ որ զմայելաւ
բազմութիւնը նիւթապէս և բարոյապէս յագեալ,
ստերներն զգացուած, մտքերնին յուզուած և փո-
րերնին լեցուած կը պատրաստուէր իւր յիսկա-

տար շնորհակալքը յայտնելու հանդիսադիր խորին,
բայց կը վարանէր նորա կերպին վրայ և ահա չորս
երկուստարող կը փութան օգուտ քաղել այս պարա-
րեալ հօտէն, Կարմիր վանքը մէջ գալով 40-ի
չափ գիւղօրէից համար վարձապետանոց մը հիւ-
նել կառաջարկուի, և իսկոյն բաժանորդագրու-
թիւն մը կը բացուի, բաժին տարեկան կէս ոսկի,
և հինգ տարի անցնելու վճարելու պայմանաւ. եր-
կու ժամ չը տեղ և ահա մօտ 200 բաժին դրոշ-
մուցեալ թղթին վրա: Բաժինները իրենց որոշեալ
թիւը գտնելուն պէս, պիտի ձեռնարկուի դրամ-
ները հաւաքելու, որք պիտի անհատին վարչու-
թեան, որպէս զի առանձին մասնագիտող ընտրե-
լով առաջադրեալ նպատակին գործած է մատա-
կարարէ: Հայոց այս փառաւոր ընթացից և գոր-
ծառնութեանց առաջ նոյն իսկ թուրքերը մեծ
նախանձալուրդութեամբ վառուել սկսեցին, բայց
ցայսօր ինքն իրենց վնչ կարողալն ի զատ բան
մը ըրած չեն: Մեծ կարեւորութիւն ունի նոյնպէս
նշանակել թէ գիւղացի հայքն ևս շատ զգածեալ
են, և խումբ խումբ երկուստարողներ կը դիմեն
քաղաքը, յայտնելով թէ իրենք ևս մտադիր են,
պատրաստ են և շատերն մինչև իսկ ձեռնարկե-
ր են ընկերութիւններ կազմուել, և պաշտպանու-
թեան, ուղղութեան կը կարօտեն, զոր քաղա-
քի երկուստարողութիւնն կը ցանկան առնուլ:

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

Ս. ՊԵՏԵՐՈՒԳ, 5 յուլիսի: Պետական բան-
կի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 92
ր. 5 կ., երկրորդ 95 ր., երրորդ 95 ր.,
չորրորդ 94 ր. 75 կ., ներքին 50% առա-
ջին փոխառութեան տոմսակը արժէ 232
25 կ., երկրորդ 232 ր. 50 կ., արևելեան
առաջին փոխառութեան տոմսակը արժէ
92 ր. 87 կ., երկրորդ 92 ր. 75 կ., ոսկի 8
ր. 17 կ.: Տրամադրութիւնը խաղաղ է:

Ս. ՊԵՏԵՐՈՒԳ, 6 յուլիսի: Նրէկ Նաճան-
գական դատարանում սկսվեցաւ Գրօնեան փո-
ղոցում պատահած Վլադիմիր սպանութեան
գործի ընտելութիւնը, որ վերջացաւ այսօր գիւ-
շերը ժամը երկուսին: Նրդուեալները ճանաչե-
ցին Լօնդսբըրգին մեղաւոր գիտակցական
սպանութեան մէջ: Պատարանը դատապար-
տեց նրան զրկելով նրան իրաւունքներից,
պարտել նրան տաժանակիր աշխատանքներին
տասն և հինգ տարով:

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՐ ԱՐՄԻՆԻ

մեջ. նա չէր կարող օրինաւոր վերակացուներ վար-
ձել, որ հակէին աշակերտների բարոյականութեան
և դպրոցների կարգապահութեան վրա. նա չէր
կարող մատակարարել դպրոցների ամենանհրա-
ժեշտ դատական պիտոյքները *), այլ ևս չէին խօ-
սում այն բանի վրա, որ դպրոցները բոլորովին
զուրկ էին պատկերներից, ֆիզիքական գործիքնե-
րից, ուսուցչական մատենադարանից և այլն: Եւ
ոչ հարկաւոր եմ համարում ասել, որ դաստաները,
և Աղատիւնի ժամանակից մնացած նստարաննե-
րը բոլորովին յարմարացած չէին դպրոցական ա-
ռողջապահութեան կանոններին: Հոգաբարձութիւնը
ստիպւած էր ամեն պահանջների մէջ խնայողու-
թիւնը աչքի առնել ունենալ, և ուղղութեան
դարձնել դպրոցների մէջ գործող անձինքների ոչ
այնքան արժանաւորութեանը, որքան նրանց էժա-
նութեանը: Ինչպէս այս տարի վարձվեցան մի քա-
նի տեղացի վարձապետներ նրա համար միայն, որ
յանձն առան փոքր ուժիկներով ծառայել:

Բայց միթէ կարելի էր դպրոցների ամբողջ ար-
դիւնքը ծախել վարձապետների վրա. այսպէս ինչով
պէտք էր հոգալ միւս պահանջները:

(Կը շարունակվի)

*) Շատ անգամ դասերը անօգուտ են անցել
կտակ չը լինելու համար. շարժանքով, ամբիւն-
քով դրաւոր դասեր չեն եղել, որովհետեւ դատաւար-
տակի գոյնը մնալից էր. շատ անգամ վարձապետը
առաւօտեան առաջին դասին դասատու չէ մտել,
որովհետեւ վառած չէր, և սպասել է, մինչև սե-
նակը աշակերտների չնշով տարանայ....

